Կարգապահական գործ թիվ ԿԳ-16211

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 6-ի թիվ 91 ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 57-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՇԻՐԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գևորգ Շիրինյանին (արտոնագիր թիվ 464) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Քաղաքացի Մարգարիտա Հարությունյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմելով Պալատ՝ հայտնել է, որ դեռևս 16.10.2014թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (**այսուհետ նաև՝ Դատարան**) ընդդեմ Սպիտակի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ իրեն մեկ սենյականոց բնակարան հատկացնել պարտավորեցնելու պահանջով: Դիմողը հայտնել է, որ թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով իր շահերի պաշտպանն է հանդիսացել Գևորգ Շիրինյանը, որը պարտավորվել է զբաղվել այդ գործով մինչև վերջնական լուծում ստանալը:

Ըստ դիմումատուի, փաստաբան Գևորգ Շիրինյանն իրեն բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել (խախտել է ձեռնհասության սկզբունքը), չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը և կատարել է Դիմողի նպաստավոր շահերից չբխող արարքներ:

Դիմելով Պալատ՝ Մարգարիտ Հարությունյանը խնդրել է կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Գևորգ Շիրինյանի նկատմամբ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 17.10.2016թ. թիվ 431-Ա/ԿԳ-16211 որոշմամբ փաստաբան Գևորգ Շիրինյանի

(արտոնագիր թիվ 464) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

20.10.2016թ. կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Գևորգ Դավթյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողն իր բացատրություններում հայտնել է, որ դեռևս 16.10.2014թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Սպիտակի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ իրեն մեկ սենյականոց բնակարան հատկացնել պարտավորեցնելու պահանջով: Դիմողը հայտնել է, որ թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով իր շահերի պաշտպանն է հանդիսացել Գևորգ Շիրինյանը, որը պարտավորվել է զբաղվել այդ գործով մինչև վերջնական լուծում ստանալը:

Ըստ Դիմողի՝ ՀՀ վարչական դատարանի 16.04.2015թ. վճռով իր հայցը մերժվել է, որից հետ Գևորգ Շիրինյանի օգնությամբ ներկայացրել է վերաքննիչ բողոք, և վերաքննիչ դատարանի 02.12.2015թ. որոշմամբ իր վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ վարչական դատարանի 16.04.2015թ. վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Դիմողը հայտնել է, որ Դատարանը՝ հաշվի առնելով վերաքննիչ դատարանի որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ իրենք գործի նոր քննության ժամանակ հրաժարվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության դեմ առաջադրված պահանջներից, իր 21.06.2016թ. որոշմամբ նշել է, որ 03.05.2016թ. նիստի ժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարության դեմ ներկայացված պահանջներից հրաժարվելու պարագայում առաջ է գալիս հայցադիմումում ձևական սխալները շտկելու, պահանջները հստակեցնելու և/կամ դատավարական ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտություն, քանի որ Սպիտակի քաղաքապետարանի նկատմամբ ներկայացվել է պարտավորեցման հայց 13.10.2014թ., մինչդեռ վերջինս մերժել է բարենպաստ ակտ կայացնելու դիմումը դեռևս 20.05.2014թ.: Այսինքն՝ տվյալ դեպքում անձը կարող էր պարտավորեցման հայց ներկայացնել մինչև 20.07.2014թ., սակայն ներկայացրել է այդ ժամկետի բացթողումով, միայն՝ 13.10.2014թ.:

Ըստ Դիմողի՝ ՀՀ վարչական դատարանն իր այդ որոշմամբ հայցապահանջի հստակեցման կամ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու համար սահմանել էր երկշաբաթյա ժամկետ:

Դիմողը հայտնել է, որ ինքը հայցադիմումը հստակեցնելու կամ համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար խնդրել իր փաստաբանին միջոցներ ձեռնարկել, սակայն նա ամեն անգամ ասել է, որ անպայման կներկայացնի:

Դիմողը նշել է, որ իր փաստաբան Գևորգ Շիրինյանն այդպես էլ ոչ հայցն է հստակեցրել, ոչ էլ միջնորդություն է ներկայացրել դատարան, քանի որ ՀՀ

վարչական դատարանը 05.08.2016թ. կայացրել է գործի վարույթը կարճելու մասին որոշում, իսկ կարճման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դիմողը բաց է թողել դատավարական ժամկետը, իսկ այն հարգելի համարելու վերաբերյալ որևէ միջնորդություն չի ներկայացվել:

Դիմողի կարծիքով, իր փաստաբանի անբարեխիղճ գործունեության պատճառով ինքը վերջնականապես զրկվել է իր իրավունքի դատական պաշտպանությունից և բնակարան ստանալու ակնկալիքից:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողը Նախապատրաստողի մոտ 05.12.2016թ. տվել բացատրություն այն մասին, որ ամբողջությամբ առարկում է իրեն հասցեագրված մեղադրանքները:

Նշել է, որ իր և Դիմողի միջև կնքվել է պայմանագիր, որով իրականացրել է Դիմողի շահերի պաշտպանությունը: Հայտնել է, որ այդ պայմանագրով սահմանված վարձի վերադարձման համար Դիմողը բողոք էր ներկայացրել փաստաբանների պալատ, որի հարուցումը սակայն մերժվել էր (Պատասխանողը որպես ապացույց 14.12.2016թ. Նախապատրաստողին է ներկայացրել Պալատի նախագահի տեղակալի 22.06.2016թ պատասխան գրությունը):

Դիմողը դատական գործի ընթացքում ցանկացել է, որպեսզի ինքը մի պահանջ ներկայացնի, որն ըստ էության հակասում է իր շահերին: Մասնավորապես, Դիմողը ցանկացել է, որ առկա դատական վարույթով Սպիտակի քաղաքապետարանին պարտավորեցվի Դիմողին (հայցվորին) ներգրավվելու բնակարան ստանալու անձանց ցուցակում. այնինչ, Պատասխանողը գիտեր, որ Դիմողը այդ ցուցակից հանված չէ, ինչի մասին բազմիցս նշված է եղել նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումների մեջ: Այսինքն, եթե նա հայցի հստակեցմամբ ցուցակում ընդգրկվելու պահանջ ներկայացներ, ապա փաստացի կհակասեր Դիմողի շահերին, ինչն անթույլատրելի է: Այդ պատճառով Պատասխանողը կրկին անգամ բացատրել է այդ մասին Դիմողին, հայտնել նաև, որ պետք է պնդեն իր կողմից կազմված դիմումով ընդդեմ ՀՀ Քաղաքաշինության նախարարության բնակարան հատկացնելու և դրանով պայմանավորված դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու դատարան ներկայացված 03.05.2016թ պահանջը, ինչը սակայն չի ընդունվել Դիմողի կողմից և նա ըստ էության հրաժարվել է հետագա իր ծառայություններից: Չնայած դրան, նա եկել է հետագա վարչական դատարանի նիստերին, սակայն Դիմողը կրկին անգամ հրաժարվել է իր ծառայություններից: Ինչ վերաբերում է 21.06.2016թ. Դատարանի մատնանշում կատարելուն դատավարական ժամկետ սահմանելու մասին որոշմանը, ապա այն իրեն չի ուղարկվել, հետևաբար անգամ նման պարագայում ինքը չէր կարող այդ որոշմամբ սահմանված ժամկետում միջնորդություն ներկայացներ, թեև արդեն նշել է, որ Դիմողը նաև հրաժարվել էր իր ծառայություններից:

Ինչ վերաբերվում է Դիմողի կողմից բացատրության մեջ նշված ձայնագրությանը, որտեղ ինքն իբր խոստացել է շահած վճիռ, հակառակ դեպքում վերադարձնել գումարները, ապա դա չի կարող իրականությանը համապատասխանել: Հայտնել է, որ որևէ մեկը իրավասու չէ առանց իր համաձայնության իրեն ձայնագրել. այդ ձայնագրությունը նաև անթույլատրելի է և խնդրել է դա հաշվի չառնել:

Պատասխանողն իր բացատրությանը կից ներկայացրել է իր կողմից կազմված և Դիմողի կողմից ստորագրված 03.05.2016թ. դիմումը. որով խնդրվել է Դատարանին պատշաճ Պատասխանող ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը և նրան պարտավորեցնել Մարգարիտա Հարությունյանին հատկացնելու մեկ սենյականոց բնակարան, ինչպես նաև վերականգնել ՀՀ քաղաքաշինության նախարարին ուղղված հարցի լուծման մերժումները ստանալուց հետո բողոքարկելու համար նախատեսված դատավարական ժամկետների բացթողման ժամկետը: Դատական նիստում Դիմողը այդ դիմումից հրաժարվել է իր կամքով:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Գևորգ Դավթյանի կողմից 20.12.2016թ. կազմվել է եզրակացություն, համաձայն որի հաստատվել են հետևյալ փաստերը՝

ա. Պատասխանողի և Դիմողի միջև 05.05.2013թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման թիվ 7 պայմանագիր, որի հիմքով Պատասխանողը ներկայացրել է Դիմողի շահերը, այդ թվում ՎԴ6/0132/05/14 վարչական գործով դատական ատյաններում.

բ. թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով Պատասխանող փաստաբանը կազմել է դիմում, որով խնդրել է դատարանին պատշաճ Պատասխանող ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը և վերջինիս պարտավորեցնել Մարգարիտա Հարությունյանին հատկացնել մեկ սենյականոց բնակարան և դրանով պայմանավորված վերականգնել ՀՀ Քաղաքաշինության նախարարին ուղղված հարցի լուծման մերժումներն ստանալուց հետո բողոքարկելու համար նախատեսված դատավարական ժամկետների բաց թողնման Ժամկետը: Այդ դիմումը թեև կազմել է Պատասխանող փաստաբանը, սակայն այն ստորագրել և 03.05.2016թ. դատարան է ներկայացրել Մարգարիտա Հարությունյանը՝ Դիմողը.

գ. Պատասխանողն իր բացատրությամբ փաստել է, որ իր վստահորդը Դիմողը, պահանջել է որպեսզի ինքը հրաժարվի ՀՀ քաղաքաշինության նախարարության դեմ ներկայացված մեկ սենյականոց բնակարան ներկայացնելուն պարտավորեցնելու 03.05.2016թ. դիմումից և պահանջի Սպիտակի քաղաքապետարանին իրեն ընդգրելու բնակարան ստանալու հերթագրման ցուցակի մեջ: Այդ պահանջը Պատասխանող փաստաբանի կողմից չի ընդունվել, քանի որ նախ Դիմողը հերթագրման ցուցակից հանված չէ, որի մասին բազմիցս նշվել է նաև վերաքննիչ դատարանի որոշումներում, երկրորդ այն կհակասեր Դիմողի շահերին: Այդ հանգամանքներից հետո Դիմողը փաստացի չի վստահել իր փաստաբանին և գործել է ինքնուրույն.

դ. Պատասխանող փաստաբանի բացատրությամբ փաստվել է, որ 03.05.2016թ. դիմումից հրաժարման և Սպիտակի քաղաքապետարանի դեմ նոր պահանջի ներկայացման անհամաձայնության պայմաններում Դիմողը հրաժարվել է իր կողմից հետագա մատուցվելիք ծառայություններից.

ե. թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով 13.05.2016թ. հրավիրված նախնական դատական նիստում առանց իր փաստաբանի (Պատասխանողի) համաձայնության Մարգարիտա Հարությունյանը (Դիմող) չի պնդել իր կողմից ներկայացված 03.05.2016թ. դիմումը, քանի որ հայցը ներկայացրել է Սպիտակի քաղաքապետարանի դեմ, ինչի հիմքով պայմանավորված դատական քննության առարկա է դարձել Սպիտակի քաղաքապետարանի կողմից Հայցվորին մեկ սենյականոց բնակարան հատկացնելուն պարտավորեցնելու պահանջը.

զ. Դիմողը 07.06.2016թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատ, որով խնդրել է միջոցներ ձեռնարկել փաստաբան Գնորդ Շիրինյանին վճարված փաստաբանական ծառայության գումարը հետ վերադարձնելու համար, ինչը 22.06.2016թ.Պալատի նախագահի տեղակալ Ա. Հովհաննիսյանի պատասխան գրությամբ բավարար չի համարվել փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար.

է. 21.06.2016թ. թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական դատարանի որոշմամբ հայցվորին (Դիմողին) առաջարկվել է դատարան ներկայացնել հայցի առարկայի հստակեցում կամ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողությունները կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն, որի համար սահմանվել է երկշաբաթյա ժամկետ որոշումը ստանալու պահից.

ը. 21.06.2016թ. թիվ ՎԴ6/0132/05/14 գործով վարչական դատարանի որոշումը ստացել է Դիմողը, այն Պատասխանողին չի ուղարկվել: Այն, որ իրեն այդ որոշումը չի հանձնվել Պատասխանողը նշել է նաև իր բացատրության մեջ, հայտնելով նաև, որ իրենց միջև շահերի հակասություն է եղել, և Դիմողը հրաժարվել է իր ծառայություններից, ինչի ապացույցներից մեկն էլ նա է եղել, որ իր դեմ ավելի վաղ 07.06.2016թ. Դիմողը կարգապահական վարույթ հարուցելու դիմում է ներկայացրել.

թ. ՀՀ վարչական դատարանը 05.08.2016թ. թիվ ՎԴ6/0132/05/14 որոշմամբ կարճել է գործը, հիմքում դնելով այն, որ դատարանի կողմից սահմանված երկշաբաթյա ժամկետում Հայցվորը հայցի հստակեցում չի կատարել կամ Սպիտակի քաղաքապետարանի դեմ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն չի ներկայացրել:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- 05.05.2013 թ. Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է իրավաբանական ծառայություն մատուցելու թիվ 7 պայմանագիր **(այսուհետ՝ Պայմանագիր)**

որի հիմքով Պատասխանողը ներկայացրել է Դիմողի շահերը, այդ թվում ՎԴ6/0132/05/14 վարչական գործով դատական ատյաններում:

- 16.10.2014թ. Դիմողը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Սպիտակի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ իրեն մեկ սենյականոց բնակարան հատկացնել պարտավորեցնելու պահանջով:
- Թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով Դիմողի շահերի պաշտպանն է հանդիսացել Գևորգ Շիրինյանը, որը պարտավորվել է զբաղվել այդ գործով մինչև վերջնական լուծում ստանալը:
- 03.05.2016թ. ՎԴ6/0132/05/14 վարչական գործով հայցվոր Մարգարիտ Հարությունյանի ստորագրությամբ դատարան է ներկայացվել դիմում, որով խնդրել է պատշաճ պատասխանող ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը և վերջինիս պարտավորեցնել Դիմողին հատկացնել մեկ սենյականոց բնակարան և դրանով պայմանավորված, վերականգնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված հարցի լուծման մերժումներն ստանալուց հետո բողոքարկելու համար նախատեսված դատավարական ժամկետների բաց թողման ժամկետը:
- 03.05.2016թ. դիմումը կազմվել է Պատասխանողի կողմից:
- 13.05.2016թ. նախնական դատական նիստին Դիմողը հայտնել է, որ չի պնդում 03.05.2016թ. դիմումը:
- 21.06.2016թ. Դատարանը թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով կայացրել է «Մատնանշում կատարելու և դատավարական ժամկետ սահմանելու մասին» որոշում, որով Դիմողին առաջարկվել է դատարան ներկայացնել հայցի առարկայի հստակեցում կամ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն և սահմանվել է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու համար երկշաբաթյա ժամկետ՝ նշված որոշումը ստանալու պահից:
- 05.08.2016թ. Դատարանը թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով կայացրել է «Վարչական գործի վարույթի կարճելու մասին» որոշում, այն հիմնավորմամբ, որ Դիմողի կողմից սահմանված երկշաբաթյա ժամկետում բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացրել դատարան:
- Պատասխանողը ՎԴ6/0132/05/14 վարչական գործով կայացած նախնական դատական նիստերով չի ապահովել Դիմողի շահերի պատշաճ պաշտպանություն:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 29.03.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Պատասխանող Գևորգ

Շիրինյանը (արտոնագիր համար 464) փաստաբան է հանդիսանում 02.09.1996թ-ից: 2006-2017թթ ընկած ժամանակահատվածում Գևորգ Շիրինյանի նկատմամբ 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված ՀՀ փաստաբանական պալատի նախագահի *2016 թվականի հոկտեմբերի 17-ի Թիվ 431-Ա/ԿԳ-16211* որոշմամբ հարուցված կարգապահական գործի), որոնցից երեքը կարճվել են, իսկ մեկով փաստաբանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, որը որպես տույժ մարվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գևորգ Շիրինյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ 3.1.8 ենթակետի պահանջների խախտման մասով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերողվող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Վերոնշյալ կանոնի պահանջներից բխում է, որ փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարումը ապահովելու նպատակով պարտավոր է տիրապետել իրավունքի տվյալ ճյուղի իրավակարգավորումներին և բազմակողմանի ուսումնասիրելով հանձնարարության վերաբերվող գործի բոլոր փաստական հանգամանքներն ընտրի վստահորդի իրավական խնդիր լուծման ճիշտ ուղղություն՝ դրանով իսկ երաշխավորելու իր վստահորդի իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Սույն կանոնը պարտավորեցնում է փաստաբանին իր մասնագիտական իրավախորհրդատվական և իրավապաշտպան գործառույթներն իրականացնելիս ցուցաբերել ջանասիրություն, անհրաժեշտության դեպքում հանդես գալ իր վստահորդի անունից անձամբ՝ արդյունավետ իրականացնելով վերջինիս շահերի պաշտպանություն:

Հաշվի առնելով, որ դատավարական կողմերի միջև դատավարությունն իրականացվում են կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների հիման վրա, ապա բոլոր այն դեպքերում, երբ կողմերից որևէ մեկն իրավունքի իմացության առումով ունի առավելություն, ապա նա դատավարության ընթացքում ձեռք է բերում առավել շահեկան դիրք, քան մյուսը, հետևաբար փաստաբանը, գիտակցելով վերոնշյալը, պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներ անձամբ իր վստահորդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ստանձնելու ուղղությամբ:

Սույն կարգապահական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է, որ Պատասխանողը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դիմողի հետ, որով ստանձնել է պարտավորություն Դիմողի առաջադրանքով մատուցել իրավաբանական ծառայություններ, այդ թվում իրականացնել դատական ներկայացուցչություն թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով՝ որպես Դիմողի ներկայացուցիչ.

Խորհուրդն ուսումնասիրելով թիվ ՎԴ6/0132/05/14 վարչական գործով դատական նիստերի արձանագրությունները, փաստում է, որ Պատասխանողի կողմից սույն գործի շրջանակներում չի իրականացվել հանձնարարության բարեխիղճ և պատշաճ կատարում, մասնավորապես՝ Պատասխանողը պարբերաբար չի ներկայացել դատական նիստերին, ժամանակին չի իրականացրել անհրաժեշտ դատավարական գործողություններ, չի համաձայնեցրել դատական նիստին իր բացակայությամբ վստահորդի մասնակցությունը, իսկ Դիմողը, չունենալով համապատասխան իրավական գիտելիքներ, չի կարողացել արդյունավետ իրականացնել իր շահերի պաշտպանությունը:

Պատասխանողն իր բացատրություններում հայտնել է, որ Դիմողը հրաժարվել է իր ծառայություններից, մինչդեռ նման ապացույց Պատասխանողի կողմից չի ներկայացվել, ավելին դատական նիստի արձանագրություններում առկա են Պատասխանողի կողմից դատական նիստերը հետաձգելու միջնորդություններ, ինչը վկայում է, որ Պատասխանողն շարունակել է հանդիսանալ Դիմողի ներկայացուցիչը, սակայն պարբերաբար տարբեր պատճառաբանություններով չի ներկայացել դատական նիստերին:

Այսպիսով, վերոնշվածը հաշվի առնելով, Խորհրդի գնահատմամբ Պատասխանողը բավարար ջանասիրություն չի ցուցաբերել Դիմողի շահերի պաշտպանության, վերջինիս իրավական խնդրի արդյունավետ լուծման ուղղությամբ:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտումների վտանգավոր բնույթը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն

…

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

… :

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը՝ միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին

լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Անդրադառնալով Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման հանգամանքին, Խորհուրդը գտնում է, որ կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեին փաստաբան Գևորգ Շիրինյանի կողմից այս ենթակետի խախտման փաստը:

Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ փաստաբանի: Հետևաբար, Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի, Պալատի կանոնադրության 16.26 կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գևորգ Շիրինյանի (արտոնագիր թիվ 464) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.8 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16211 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Գևորգ Շիրինյանի (արտոնագիր թիվ 464) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Գևորգ Շիրինյանի (արտոնագիր թիվ 464) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան